

Ա. խումբէն հայր մը և Բ. խումբէն մայր մը (կամ հակառակը) կրնան տալ չորս տեսակի ալ գաւակներ, մաքուր Ա.-եր, մաքուր Բ.-եր, խառնուրդ ԱԲ.-եր, և նոյնիսկ Օ.-եր, որովհետեւ թերեւս իրենց արեան մէջ թաքուն կերպով գոյութիւն ունի Օ ենթամնաց յատկանիշը՝ հինէն մնացած:

Իսկ Օ արենախումբին պատկանող երկու ծնողքներ միայն և միայն Օ տեսակի գաւակներ կրնան ծնիլ, որովհետեւ տիրապետուող յատկանիշէ մը երբեք չի կրնար տիրական յատկանիշ մը դուրս գալ, մինչդեռ հակառակը կարելի է. տիրապետուող յատկանիշ մը ինքն իր մէջ միշտ մաքուր է, իսկ տիրական յատկանիշ մը՝ ոչ միշտ, որովհետեւ կրնայ ենթամնաց յատկանիշ մը պարտկած ըլլալ:

Ո՞վ կրնայ դուշակել թէ այս չոր ծանօթութիւնները կիրառուածի ինչ լայն կարելիութիւններ պիտի տան ցեղային ազնուացումի տեսակէտով:

Փ. ՍԱՆԱՍՍԱՐ

(3)

ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐՈՒ ԽԱՌՆՈՒՐԳՆԵՐԸ (*cocktails*). — Փրոֆ. Կիլէն Ֆրանս. Բժշկական կանոններն առջեւ ներկայացուց ոգելից ըմպելիներու ակտիւ հետեւանքները: Փրոֆէսէօրը կ'ըսէ թէ ոգելից ըմպելին ծանր ազդեցութիւն կը գործէ այն երիտասարդներուն վերայ, որոնք կը թունաւորին ինքզինքնին: Նախ կը թուէ մարտդական գործարանին խանգարումները, լեարդային հիւանդութիւնները, սիրտի տկարութիւնները եւ նուազումները, ցղային ցաւերը եւ անքնութիւնը, ֆիզիքական ուժասպառութիւնը, հոգեկան յոգնութիւնը, մտային աշխատանքներէ փախուստը, զգայութեանց տկարացումը եւ ներքին մղումներու հակազդեցութիւնը, հոգեկան յուսահատութիւնը, այս ամէնը իբրեւ հետեւանք ոգելից ըմպելիներու չարաչար գործածութեան: Փրոֆէսէօրը կը կարծէ թէ լուսնոտութեան լետադարձ նոպաները արդիւնք են ոգելից ըմպելիներու: Գարծեալ հեղի. նակաւոր այս ջլախատարօժը ոգելից ըմպելիներուն կը վերագրէ ինքնաշարժի արկածները, իբրեւ հետեւանք հոգեշարժային կեդրոններու խանգարման: Ոգելից ըմպելիներու այս հետեւանքները ակտի շեշտուած երեւան եկած են վերջին տարիներու ընթացքին մասնաւորաբար բարեկեցիկ եւ հարուստ դասակարգի պատկանող երիտասարդներու մօտ, այն օրէն ի վեր երբ ընդհանրացաւ զանազան ըմպելիներու խառնուրդներու (*cocktail*) գործածութիւնը:

